

ԴԴԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N1

1. Ընդհանուր տեղեկատվություն

Միջոցառման անվանում	Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություն
Դրամաշնորհի N	1032-11002/2025-SS
Դրամաշնորհատու կազմակերպություն	ՀՀ ԱՍՀՆ
Դրամաշնորհառու կազմակերպություն	«Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա» ՀԿ
Միջոցառման իրականացման ժամանակահատված	01.01.2025-31.12.2025
Հաշվետու ժամանակահատված	01.07.2025-30.09.2025
Ներկայացման օր	10.10.2025
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	Լիլիթ Մուրադյան, Ծրագրի համակարգող

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

- | |
|---|
| 1.3. Խնամքի ծառայությունների տրամադրում
3.1. Սոցիալական աշխատողի խորհրդատվություն
5.2. Համայնքային միջոցառումների կազմակերպում և տարեցների մասնակցության խթանում: |
|---|

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրից օգտվել է 23 շահառու, որոնցից կին՝ 22 հոգի, հաշմանդամություն ունեցող անձ՝ 12 հոգի, հաշմանդամություն ունեցող անձ 18-65 տարեկանների խմբում՝ 1 հոգի (62 տարեկան) միայնակ անժառանգ՝ 8 հոգի, միայնակ՝ 16 հոգի, Ա խմբում դասակարգված անձանց քանակը՝ 5 հոգի: Շահառուները, բացառությամբ հաշմանդամություն ունեցող 62-ամյա 1 անձից, 73 տարեկանն անց են:

Ծրագրի շրջանակներում մատուցված ծառայությունները բավարարել են շահառուների հիմնական կենցաղային, խնամքի և առողջության պահպանման կարիքները՝ չափորոշիչների պահպանմամբ և բազմամասնագիտական թիմի ներգրավմամբ:

Ծառայությունները տրամադրվել են տնայցերի միջոցով՝ ըստ նախապես սահմանված

անհատական խնամքի ծրագրերի՝ պահպանելով օրենքով սահմանված նվազագույն չափորոշիչները:

Ծառայությունները ներառել են՝

- կենցաղային աջակցություն (տան սանիտարահիգիենիկ պայմանների ապահովում, գնումներ, կերակուրի պատրաստում և այլն),
- խնամք (անձնական հիգիենայի պահպանում, հագուստի փոխում, լոգանք և այլն)
- առողջական վիճակի մոնիթորինգ (վերահսկում, օրենքով հասանելիք դեղորայքի ստացում-տրամադրում, ուղեկցում բուժհաստատություն, բժշկի տնայից կանչ և այլն),
- ուղեկցում և ուղղորդում (անհրաժեշտության դեպքում),
- սոցիալական խորհրդատվություն,
- աջակցություն միայնակության և մեկուսացման կանխման հարցում:

Ծառայությունները տրամադրվել են սոցիալական աշխատողի, 2 սոցիալական սպասարկողի և բուժքրոջ կողմից:

- Շահառուների շրջանում նկատելի է ծառայության դրական ազդեցությունը՝ հատկապես միայնակ և անժառանգ քաղաքացիների շրջանում՝ ինչպիսին է տան հիգիենայի բարելավումը, դեղատոմսերի ստացման կայունությունը և բուժհաստատության հետ կապի արդյունավետությունը:
- Հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում ապահովվել է կայուն խնամք, ինչը նվազեցրել է անհապաղ բժշկական միջամտությունների անհրաժեշտությունը և բարելավել է դեղերի տրամադրման հետևողականությունը:
- Սոցիալական խորհրդատվությունը և միայնակ լինելու դեմ ուղղված միջամտությունները օգնել են նվազեցնել մեկուսացման սուբյեկտիվ գզացումն առնվազն որոշ շահառուների մոտ (տնայցերի հաճախականության աճ և հարևանների, ծանոթների հետ շփումների հանդեպ նախաձեռնողականություն):

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեղիա պրոդուկտներ և այլն)

Առկա չեն:

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է մի շարք գործնական խնդիր, որոնք որոշ չափով խոչընդոտել են միջոցառման գործողությունների անխափան իրականացմանը:

Մասնավորապես՝ շահառուները հաճախ են դիմում ծրագրի բուժքրոջը՝ տանը ներարկումներ կատարելու նպատակով, քանի որ առաջնային առողջապահական կենտրոններում (ԱԱՊ) տվյալ ծառայությունը տրամադրվում է վճարովի հիմունքներով: Սա պայմանավորված է թե՛ տարեցների սահմանափակ ֆինանսական հնարավորություններով, թե՛ առողջական վիճակով՝ երբեմն դժվար լինելով ֆիզիկապես հասնել բուժհաստատություն:

Այնուամենայնիվ, նման դիմումները ծրագրի շրջանակներում չենք կարող բավարարել, քանի որ ՀՀ «Բուժօգնության և սպասարկման մասին» օրենքի պահանջներով տնային պայմաններում ներարկման կամ բուժական միջամտության իրականացումը թույլատրված չէ՝ բացառությամբ օրենքով սահմանված հատուկ դեպքերի: Այդ պատճառով բուժքույրը ստիպված է լինում մերժել

շահառուների խնդրանքները, ինչը երբեմն առաջացնում է դժգոհություն և բացասական արձագանք շահառուների շրջանում:

Բացի այդ, շահառուների տարիքը և շարժունակության սահմանափակումը խոչընդոտում են նրանց մասնակցությունը ծրագրի կողմից կազմակերպվող էքսկուրսիոն միջոցառումներին: Այս խնդիրը մասամբ լուծվում է այն ձևով, որ ծրագրի աշխատակիցները մշտապես կազմակերպում են համատեղ միջոցառումներ շահառուների հետ՝ տոնելով ազգային և պետական տոները, ինչպես նաև նրանց ծննդյան տարեդարձերը: Այս նախաձեռնությունները նպաստում են շահառուների սոցիալականացմանը, միայնության զգացման նվազեցմանը և հոգեբանական բարեկեցության բարձրացմանը:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

Հաջորդ եռամսյակի ընթացքում պլանավորված է շարունակել խնամքի ծառայությունների տրամադրումը սոցիալական աշխատողի, սոցիալական սպասարկողների և բուժքրոջ միջոցով:

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:

Բոլոր գործողություններն իրականացվել են ըստ աշխատանքային պլանի:

Պ Ա Տ Վ Ի Դ Ա Տ ՈՒ

Գլխավոր քարտուղարին փոխարինող՝
Վ.տեր-Բալյանին

(ստորագրություն)

Կ.Տ.

Կ Ա Տ Ա Դ Ո Ղ

Նախագահ՝ Ա. Թորոսյան

